



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱԿՈՒՇԻ ՄԱՐԶՊԵՏ
Ո Ր Ո Շ ՈՒ Մ

22 մայիսի 2018 թվականի թիվ 63-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵՆՈՎ
<<ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄ>> ԾՐԱԳՐՈՎ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱԿՈՒՇԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻՆ
ՀԱՏԿԱՑՎԱԾ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՀԱՇՎԻՆ <<ԼԵՔԻԱԹԻՆ ՀՅՈՒՐ>>
ՄԻՋՈՑԱՌՄԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ ԳՈՒՄԱՐ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ
ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի դեկտեմբերի 28-ի N1717-Ն որոշմամբ՝ 2018թ. Հայաստանի Հանրապետության պետական բյուջեով <<Մշակութային միջոցառումների իրականացում>> ծրագրով Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզպետարանին հատկացված միջոցների հաշվին <<Լեքիաթին հյուր>> միջոցառման կազմակերպման նպատակով՝

որոշում եմ.

1. 2018թ. Հայաստանի Հանրապետության պետական բյուջեով <<Մշակութային միջոցառումների իրականացում>> ծրագրով Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզպետարանին նախատեսված միջոցներից 750 հազ. դրամ գումարն ուղղել <<Լեքիաթին հյուր>> միջոցառման կազմակերպմանը:
2. Հանձնարարել << Տավուշի մարզպետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչությանը՝ <<Լեքիաթին հյուր>> միջոցառումը կազմակերպել << Տավուշի մարզպետի կողմից հաստատված ծրագրին համապատասխան:
3. Որոշման կատարման հսկողությունը դնել << Տավուշի մարզպետի տեղակալ
4. Ադամյանի վրա:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:



Հ. ԱՐՈՎՅԱՆ

ք. Իջևան
22 մայիսի 2018թ.

ԾՐԱԳՐԻ ՆԿԱՐԱԳԻՐ

<< ՀԵՔԻԱԹԻՆ ՀՅՈՒՐ >> ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՄԻՋՈՑԱՈՄԱՆ

Անցկացման ժամկետը, վայրը, նպատակը, համագործակցությունը, ծախսերը

2018թ հունիսի 1-ին նախատեսվում է մարզկենտրոն հջևանում կազմակերպել երեխաների իրավունքների պաշտպանության օրվան նվիրված տոնակատարություններ: Ք. հջևանի Ա. Մելիքբեկյանի անվան հրապարակում կանցկացվի կավճանկար-մրցույթ, միաժամանակ նույն հրապարակի բեմահարթակից ելույթ կունենան մարզի մշակութային համույթներ, անհատ կատարողներ:

Կշրջեն սիրված հեքիաթների հերոսների կերպարներ և երեխաներին անվճար կբաժանեն պաղպաղակներ, ծաղիկներ, փուչիկներ:

Կկազմակերպվի մանկական շուու, ելույթ կունենան ժանգյորներ, կկազմակերպվեն խաղեր, կլինի հրավառություն:

Լավագույն աշխատանքները կգնահատվեն և կխրախուսվեն հուշանվերներով:

Միջոցառման իրականացման համար նախատեսվում է համագործակցել հջևանի քաղաքապետարանի, հջևանի <<ՍՕՍ>> մանկական գյուղի, <<Կորլո Վիժն>> միջազգային հասարակական բարեգործական և <<Նույսի կամուրջ>> հասարակական կազմակերպությունների, հջևանի երաժշտական և արվեստի դպրոցների, հանրակրթական դպրոցների, մանկապարտեզների, պարարվեստի համույթների, անհատ կատարողների և ՁԼՄ-ների հետ:

Իրականացման համար նախատեսված գումարը կազմում է 750 000 դր.:

Կընդգրկվեն հնարավորինս մեծ թվով ուսումնական հաստատություններ, երիտասարդական և մշակութային կազմակերպություններ, մտավորականներ, համայնքների ներկայացուցիչներ և այլն:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ԿԱՏԱՐՈՂ

ՀՀ Տավուշի մարզպետարանի աշխատակազմ
ք. հջևան, Սահմանադրության 1
հջևանի ՏԳԲ
Հ/Հ 900371001190
ՀՎՀՀ 07611324

“Բայրամյան”ՍԲՀԿ
Ք.հջևան, Նալբանդյան 1
<<Կոնվերս բանկ>> ՓԲԸ հջևանի մ/6
Հ/Հ 1930042225460100
ՀՎՀՀ 07611881

